

# ՄԱՐԷ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

## 30 Յունուար 1974 Մօնթրէալ

**ԳԵՐԱՇՆՈՐՀ**  
ՏԷՐ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ եւ թեմական խորհուրդոյ նախագահ  
Հիւսիսային Ամերիկայի Հայոց  
Ն Ի Ե Ո Ր Բ

Սիրելի Սրբազան Հայր,

Մօնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյս տարեկան ծխական անդամական ժողովը գումարուեցաւ մեր նախագահութեամբ եւ համաձայն Մայր կանոնագրութեան, 27 Յունուար 1974 թամբ 3.30ին Եկեղեցւոյս Մարի Մանուկեան Սրահին մէջ ի ներկայութեան 94 տրատու անդամներու:

Մեր աղօթքով սկսած ժողովին ձեռնբաց քուէներով ատենապետեց Եկեղեցւոյս պատգամաւոր ու միանգամայն թեմական խորհուրդոյ անդամ Տոքթ. Արշաւիր Կէօնժեան իրեն օգնական ունենալով Տիկնայք Վարդուհի Պալեանը եւ Անահիտ Գալայժեանը որպէս քարտուղարներ:

Կատարեալ լրջութեան եւ համերաշխ մթնոլորտի մէջ տեղի ունեցած այս ընդհանուր անդամական ժողովին մեր եւ ծխական խորհուրդոյ նիւթա-քարոյական տեղեկատուութիւնները, որոնք ներփակուած են, կը յանձնենք Ձերդ Սրբազնութեան ուշադրութեան:

Այս տարի Եկեղեցւոյս երեք պատգամաւորներն ալ կը լրացնէյին իրենց գործունէութեան շրջանը, որով կատարուեցաւ նոր ընտրութիւն գաղտի քուէարկութեամբ եւ վերջացաւ հետեւեալ արդիւնքով:

- Տոքթ. Արթին Արզումանեան \ 74 քուէ
- Տոքթ. Արշաւիր Կէօնժեան \ 72 քուէ
- Պրն. Վահէ Բէթլի \ 65 քուէ :

Դարձեալ այս շրջանին իրենց երկու տարուան պաշտօնավարու թեան միջոցը լրացնող 4 անդամներու փոխարէն, կրկին գաղտնի քուէարկութեամբ, ընտրուեցան հետեւեալ անդամները՝ ծխ. խորհուրդին համար

- Տոքթ. Հրայր Տէր Գէորգեան \ 74 քուէ
- Տոքթ. Նայիրի Գալընեան \ 72 քուէ
- Պրն. Առաքել Առաքելեան \ 68 քուէ
- Պրն. Ռուբէն Արսէվէր \ 67 քուէ :

# ՄԱՐԷ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Էջ -2-

Ըստ մեզմէ պահանջուածին երկու օրինակով կը ներփակենք նաեւ երկու վերոյիշեալ ընտրութեանց թեկնածուներու երկպատիկ ցանկերը իւրաքանչիւրին ստացած քուէներու արդիւնքով:

Այս պատեհ առիթով կուզանք որդիական ակնածանօք մեր յարձանքը մատուցանել Ձերդ Սրբազնութեան խնդրելով վաւերացումը վերոյիշեալ ընտրութեանց արդիւնքին:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

*Մ. Վ. Կոն. Բահանայ Ռսկանեան*

Մ. Վ. Կոն. Բահանայ Ռսկանեան  
Հովիւ Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
ի Մոնթրէալ

Ներք.

Վ.Ք.